

13 Ի մեծանալ անդէն մանկան ,
 Ծոնօղքն առ վարժեւ զայն յընթերցման ,
 Ի 'ի սուրբ հաւատ Բրիստոսեան ,
 Յանձնեալ միում երիցու տան :

14 Ուսեալ նորա զայբբենարան ,
 Ըզգիբ , սաղմոս , կտակարան ,
 Ըզժամագիրք եւ Շարական
 երգէր յաճախ ի ժամատան :

15 Մինչ չափահասն էր բաւական ,
 Կրթեալ յարուեստ Ոսկերչութեան ,
 Կայր ի կրպակ առեւտրութեան
 Ոսկեղինաց գոհարական :

16 Սակայն հակումն իւր բնական
 Միտէր ըզհետ շաւղաց ուսման ,
 Աստուածաշունչ դրոց համայն
 Եւ գիտութեանց արտաբնական :

17 Ուստի սիրովն եռանդական ,
 Եւ բաղձանօքն յօժարական
 Երթայր ստէպ յաղօթարան
 Առ լսել անդ զԱստուծոյ բան :

18 Ի քարոզիչ ըաբունս Հայոց՝
 Յոյժ տեղեակն էր յայնժամ դրոց
 Պատրիարզըն Հայկայ որդւոց
 Ի քաղաքին Բիւզանդացւոց ,

19 Որ էր տեղեալ Բաղեշեցի
 Կոչեալ անուամբ Յօհաննիսի
 Որ եւ Կօլօտ մականունի
 Քաջաքարոզ մեծ ըաբունի :